ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՀԵՅԴԱՐ ԱԼԻԵՎԻՆ

Բաքու

Մեծահարգ Տիար Նախագահ,

Մեզ համար հոգեկան մխիթարություն է պատեհությունը ունենալ Ձեզ հղելու ներկա Մեր գիրը, իբրև հետևանք Ռուսաց Պրավոսլավ Եկեղեցու Ալեքսի Բ Պատրիարքի 24 փետրվար 1994 թվակիր նամակի, որով Սրբազան Պատրիարքը, ծանրորեն մտահոգված ղարաբաղյան հակամարտության պատճառած երկու կողմերի զոհերով և ավերածություններով, հրավեր էր ուղղում Մեզ, որ Մեր խաղաղաբեր խոսքը ուղղենք հակամարտող կողմերին՝ դիմելով նրանց, որ իրենց հեղինակավոր դիրքերից ամեն հնարավորը ի գործ դնեն՝ վերջ տալու համար ռազմական գործողությանց, վերջ տալու արյունահեղությանց, և բանակցությանց ճանապարհով արդարացի և խաղաղ լուծում գտնելու Լեռնային Ղարաբաղի ողբերգության:

Մենք վստահ ենք, թե այս է նաև իղձը և ապառումը թե՛ Հայաստանի, թե՛ Ադրբեջանի և թե՛ Ղարաբաղի ազգաբնակչության:

Ձեզ կուզենայինք նաև հիշեցնել, թե Մենք և Ադրբեջանի հարգարժան Շեյխ ուլ Իսլամ Փաշազադեն ղարաբաղյան հարցի խաղաղ լուծման կոչ ուղղեցինք անցյալ տարի փետրվար ամսին Շվեյցարիայում՝ մեր հանդիպման առթիվ, ու ապա նաև Մոսկվայում: Մենք կրկնում ենք Մեր նույն կոչը՝ հուսալով, որ պիտի հարգվի ազգային ինքնորոշման իրավունքը Ղարաբաղի բնակչության:

Հարգարժան Տիար Նախագահ,

Մաղթում ենք Ձեզ քաջառողջություն և բարօրություն Ձեր ժողովրդին:

Բարի մաղթանքներով և աղոթքներով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
7 մարտի 1994 թ.